

ՄԱՍԻՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱԹԱՅԻՆ

31ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 43 (1543) ԾԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 26, 2011
VOLUME 31, NO. 43(1543) SATURDAY, NOVEMBER 26, 2011



Պաշտօնաթերթ
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104

ԷԴՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ ԴԱՒԻԹՅՈՂԼՈՒԻՆ ՄԵՂԱՊՐԱԾ Է ԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԵԶ

Հայաստանի Արտաքին գործոց նախարար է դուռը նալբանդան, հողանտական հեղինակաւոր «Տէ Վոլքսբրանթ» օրաթերթին արուած հարցազրոյցի մը ընթացին, թուրքիոյ իր պաշտօնակից Ահմեդ Դաւութօղլուին Հայկական Յեղասպանութեան հարցով մեղադրած է անդիտութեան մէջ:

«Հայաստանի բարձրագոյն դեկավարութիւնը բազմից յայտարարել է, որ Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը կամ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման կարեւորութիւնը երբեք հարցականի տակ չեն դրուել եւ չեն կարող դրուել», - ըսած է Նալբանդան:

Պատասխանելով Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացի վերաբերալ լրագրողի հարցին, նախարարը ըսած է, «1915 թուականի վերաբերեալ» պատմաբանների յանձնաժողով ստեղծելու մասին թուրքիայի արտգործնախարարի յայտարարութիւնները, փաստօրէն, փորձ են հարցականի տակ դնել ֆրանսիայի, բազմաթիւ այլ երկրների եւ միջազգային կազմակերպութիւնների կողմից Հայոց Յեղասպանութեան ճանաչման փաստը: Դա ոչ այլ ինչ է, քան վտանգաւոր ժխտողականութեան քաղաքականութեան շարունակութիւն, ինչի մասին Հայաստանում



Հայաստանի Արտաքին գործոց նախարար էդուարդ Նալբանդան
Համապատասխան յատակ յայտարարութիւն էր արել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին»:
Անդրադառնալով թուրք նախարարի պնդումներուն, թէ 2005-ին Հայաստանի նախագահին հասցէագրուած թուրքիոյ վարչապետ էրտողանի նամակին մինչեւ հիմա պատասխան չէ տրուած, Նալբանդան ըսած է. «Պէտք է նշել, որ Ռոբերտ Քոչարեանի պատասխան նամակը ուղարկուել եւ հրապարակուել է 2005թ. Ապրիլի 25-ին: Թէ միջազգային հանրութիւնը, եւ թէ թուրքիայում լաւատեղեակ են այդ նամակի բովանդակութեանը, միգուցէ բացառութեամբ մի քանիսի, ինչպիսի եզրայանգման կարելի է զալ Ահմեդ Դաւութօղլուի յայտարարութիւնից»:

ԿԻՊՐՈՍԻ Ս. ՄԱԿԱՐ ՎԱՆՔԸ ՌՅԱՆՁԱՑՄԱՆ ԵԶՐԻՆ

Ուստահան «Ուելնում» գործակալութիւնը՝ վկայակոչելով «Սայփրոս Մէլլ» օրաթերթը, կը հաղորդէ, որ Կիպրոսի թրքական հաստածին մէջ գտնուող հայկական Ս. Մակար վանքը ոչնչացման եղրին է: Ամիկա աղբանոցի վերածուած է, եւ հայերութիւններին շուտով հողին պիտի հաւասարեցուի:



Կիպրոսի թրքական հատուածին մէջ գտնուող հայկական Ս. Մակար վանքը

Պատմաբանները կը նշեն, որ վանքը հիմնադրուած է 1000 թուականին զպտիներու կողմէ՝ 4-րդ դարուն Եփապոսի մէջ ապրած Ս. Մակար Ալեքսանտրացիի իշատակին: 1425-ին վանքը դարձած է հայ եկեղեցւոյ սեփականութիւնը եւ հայերու համար ուխտատեղիի վերածուած է: Հայոց յեղասպանութեան տարիներուն վանքը այդ աղէտէն վերապրողներուն համար իբրեւ ապաստան ծառալայած է:

Մինչեւ 1974-ին թրքական բանքը այդ պահանջներուն հանդեց: Թուրքիա այդ ինքնակոչ հանրապետութիւնը մը ստեղծեց: Թուրքիա այդ ինքնակոչ հանրապետութիւնը ճանչցող միակ պետութիւնն է:

թեան լաւագոյն վայր հանդիսացած է, սակայն թրքական ուժերուն ներխուժումէն ետք վանքը աւերտուած է, իսկ այսօր արդէն աղբանոցի վերածուած:

1974-ին կիպրացի յոյներուն եւ թուրքերուն միջնեւ տեղի ունեցած բախումներէն ետք, թուրքիա գրաւեց կղզիին մէկ երրորդը եւ հիւսիսային Կիպրոսի մէջ թրքական ինքնակոչ հանրապետութիւնը ատեղծեց: Թուրքիա այդ ինքնակոչ հանրապետութիւնը մը ստեղծեց: Թուրքիա այդ ինքնակոչ հանրապետութիւնը ճանչցող միակ պետութիւնն է:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՍՊԱՌԱՅԻ ԴԻՄԵԼ ԱՏՐՊԵՅՆԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Հայաստանի գինուած ուժերը յառաջիկացին պատժիչ գործողութիւններու պիտի դիմեն՝ ի պատասխան ատրպէջանական կողմի վերջին օրերու քայլերուն, որոնց հետեւանքով անցնող շաբաթավերջին Հարաբեաղի գործուեցան Լեռնային Հարաբեաղի Պաշտպանութեան բանակի երկու գինուորները:

«Դա լինելու է մեր բնական, տրամաբանական եւ օրինաչափ արձագանքը», - «Ազատութիւն» ուստիուականին յայտնած է Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար Դաւիթ Կարապետեան՝ շեշտելով, որ հայկական կողմի պատասխանը պիտի ըլլայ անհամաչափ: «Եւ եթէ դրա արդիւնքում ատրպէջանական կողմում լինեն կորուսները, դրա ամբողջ պատասխանատուութիւնը ատրպէջանական կողմի վրայ է»:

Ատրպէջանական դիպուկահարներու կրակոցներէն նոյեմբերի 19-ին եւ 20-ին Լեռնային Հարաբեաղի հարաւարեւելքը գոնուող պաշտպանական դիրքերուն վրայ գոհուած են ժամկշտային գինծառացողները: Արէն Սիմոնեան եւ Միհրան Մարգարեան: Անոնք երկուքն

ալ 19 տարեկան էին: Քաղաքական եւ միջազգային հետազոտութիւններու հայկական կենտրոնի փորձագէտ Ռուբէն Մեհրաբեանի կարծիքով, ատրպէջանական կողմի այս քայլերուն ի պատասխան, հայկական կողմը պիտք է ձեռնարկէ ոչ միայն ուազմական բնոյթի գործողութիւններ, այլ նաև դիւանագիտական բարձրացներէն միջազգային հանրութեան առջեւ: Ան կ'առաջարկէ որ, պաշտօնական Երեւանը, օրինակ, հրաժարի ԵԱՀԿ Մինսկի խումբի բանակցութիւններէն՝ պայման դնելով, որ բանակցութիւնները կը շարունակուին այն ժամանակ, երբ Պաքուն ճակատային գիծէն ետք քաշէ իր դիպուկահարները:

«Հայկական դիւանագիտութիւնը պիտք է հարցը գնի բաւականին կոշտ, որպէս նշուած հարցադրութը միանգամացն իրաւացի է: Ի վերջոյ, Հայաստանի ղեկավարութեան պարտականութիւնն է իր քաղաքացիների անվտանգութեան պահպանական դիրքերուն վրայ գոհուած առաջնորդութեան պաշտպանականութիւնը, այդ թուում նաև զինուորականների», - ըսաւ փորձագէտ Միհրան Մեհրաբեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՇԿԵՐՈՅԹ Ի ՊԱՏԻՒ ՂԱՐԱԲԱՐԻ ՆԱԽԱԳԱՐ ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆԻՆ



Կիրակի, Նոյեմբեր 20ին, 2011, կլենտէյլ Հելթթըն պանդոկի գլխաւոր հանդիսապարահին մէջ, տեղի ունեցած պաշտօնական ճաշկերութիւնը պատիւ Լեռնային Հարաբեաղի Հանրապետութեան նախագահ՝ վանձարական ժամանակութիւնը ատեղտակութեան անդամներուն: Արդարեւ անոնք նիւթ եղութիւնը վրայով լու Անձելըս ժամանակ էին, մասնակցելու Հայաստան Համահայկական Հիմնադրամի 19րդ հեռուստամարաթոնին, որ տեղի ունեցաւ գոհաբանութեան տօնին օրը:

Սոյն ճաշկերոյթին ներկայ էր նաև Արցախի Առաջնորդ Գերշ.

Պարգեւ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի Հանրապետութեան աւագ հիւսպատութիւններու գրիգոր Յովհաննիսիսան, զաղութիւնը տարբերակութիւնը առաջնորդները, ինչպէս նաև հայկական աւանդական երեք կուսակցութիւններու եւ քոյլ կազմական պատասխանական ներկայացուցիչները:

Այս առթիւ ելոյթ ունեցաւ Արցախի նախագահ Բակո Սահակեանին: Ան նախ շնորհակալութիւնը յայտնեց ներկաներուն, որոնք միշտ նեցուկ կանգնած են Արցախին:

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԵՔԸ ԲԱՆԱԿՈՒՄ

ՅԱԿՈԲԲԱԴԱԼԵԱՆ

Նոյեմբերի 19-ին եւ 20-ին
ատրպէցանական դիպուկահար-
ների կրակոցներից զոհուել է երկու
հայ զինծառայող: Հայաստանի
պաշտպանութեան նախարարու-
թիւնն էլ զգուշացրել է, որ հայկա-
կան կողմի պատասխանը լինելու է
անհամաչափ: Դա նշանակում է, որ
հայկական կողմը Ատրպէցանին
պատճառելու է աւելի մեծ մարդ-
կացին վնաս:

Ընդ որում, հայկական կողմն
այդ մասին զգուշացնում է արդէն
Ատրպէջճանի ժողովրդին, մատ-
նանշելով Ատրպէջճանի բանակի
հրաժանատարութեան անպատաս-
խանատութիւնը: Այլ կերպ ասած,
Հայաստանի պաշտպանութեան նա-
խարարութիւնը մատնանշում է,
որ Ատրպէջճանի հրաժանատարու-
թեան համար զինուորի կեանքը
արժէք չունի, այլապէս նրանք
դիպուկահարներին գործի չէին
դնի, լաւ իմանալով, որ դրա
դիմաց հատուցելու են իրենց զի-
նուորների կեանքով:

Դժուար է ի հարկի պատկե-
րացնել, կամ ենթադրել, որ Ատր-
պէջանի ժողովուրդը, տեղեկանա-
լով Հայաստանի պաշտպանութեան
նախարարութեան յայտարարու-
թեանը, կը փորձի պատասխանատ-
ւութիւն պարտադրել իր հրամա-
նատարներին եւ նրանց ստիպել,
որ յանկարծ հայ զինուորների
վրայ չկրակեն, որ դա յետոյ
իրենց կեանքով չհատուցեն ատր-
պէջանցի զինուորները՝ իրենց
որդիները:

Բայց որ դիպուկահարների
գործողութիւնները պէտք է հենց
անհամաշխափ պատասխանի արժա-
նանան, թերեւս աներկբայց է, եւ
այդ առումով ակնկալիք կայ, որ
զոնէ այդ պարագայում Հայաստա-
նի բանակի ղեկավարութեան խօսքն
ու գործը կը լինեն համահունչ եւ
արդիւնաւէտ:

Բայց, այստեղ կայ նաեւ այլ
խնդիր, այլ արդինաւէտութեան
հարց: Ատրպէցանի ղեկավարու-
թեան, ատրպէցանական բանակի
հրամկագմի համար իր զինուորի
կեանքը գուցէ չունի որեւէ զին,
գուցէ ատրպէցանցիների ղեմոգ-
րափիական պատկերը այդ երկ-
ըում զինուորի կեանքը ենթարկել
է զգալի արժեզրկման: Դա ատր-

պէջանցիների խնդիրն է:
իսկ ինչ զի՞ն ունի Հայաստա-
նի բանակում զի՞նուորի կեանքը,
եւ արդեօք Հայաստանի բանակում
արւում է այդ կեանքը հնարաւո-
րինս անվտանգ դարձնելու համար
անհրաժեշտ աշխատանք: Խօսքը
միայն բանակում առկայ մթնո-
լորատի մասին չէ, որին պարբերա-
բար զո՞հ են գնում հաջ զի՞նծառա-
յողները:

Այդ մասին շատ է գրուել,
այժմ դիտարկենք ընդամենը հա-
կառակորդի վտանգի խնդիրը։
Հայկական զինուժը պարբերաբար
կորուստներ է ունենում ատրպէց-
ճանական դիպուկահարների կրա-
կոցներից։ Թէեւ, ինչպէս բանակի
ղեկավարութիւնն է հաւաստիաց-
նում, ատրպէցճանական բանակը
դրանք հատուցում է աւելի մեծ
մարդկային կորուստներով, այ-
դուհանդերձ մեզ համար ի հարկէ

կարեւորը պետք է լինի ոչ թէ
հատուցումը, այլ հայ զինուորի
կեանքի անվտանգութեան ապա-
հովումը, դրա մակարդակի բարձ-
րացումը:

Մեզ համար պիտք է թանկ
լինի ամէն մի զինուորի կեանքը,
ընդ որում ոչ միայն այն պատճա-
ռով, որ մենք աւելի քիչ ենք, քան
ասենք ատրպէցանցիները, այլ
որովհետեւ աշխարհում մարտու-
նակ ու արդիւնաւէտ են այն բա-
նակները, որտեղ բանակալին կար-
գի առանցքում դրուած է անհա-
տապէս ամէն մի զինուորի՝ մար-
դու արժէքը, եւ բանակն է մարդու
համար, ոչ թէ մարդը բանակի:

Որն է պատճառը, որ հայ
զինծառալցողները յաճախ են դառ-
նում ատրպէջանական դիպուկա-
հարների գոհ։ Արդեօք դա դիրքե-
րում կարգապահութեան ցածր մա-
կարդակի հետեւանք է, երբ զին-
ծառալցողները չեն պահպանում
անվտանգութեան անհրաժեշտ կա-
նոնները եւ անպաշտպան ձեւով
յայտնուում են դիպուկահարի նշա-
նառութեան տակ։ Եթէ այս, ապա
ովէ ի պատասխանատու դիրքերում
կարգապահական ցածր մակարդա-
կի համար։ Կամ, արդեօք զինուոր-
ներից շատերը պարզապէս տեղեակ
չեն անվտանգութեան անհրաժեշտ
կանոններին։ Եթէ այս, ապա ով է
պատասխանատու դրա համար։

Կամ, կան արդեօք այլ պատճառներ՝ մասնաւորապէս անվտանգութեան տեխնիկական կողմում, երբ ասենք բաւարար չեն դիրքային ամրութիւնները, կամ բաւարար չեն զրահաբանկոնները: Օրինակ, Նոյնեւը 20-ին դիպուկա-

Հարի կրակոցից սպանուած զին-
ծառայող Միհրան Մարգարեանի
մասին հաղորդագրութեան մէջ
նշւում է, որ նա մահացու վիրա-
ւորուել է կրծքավանդակի շրջա-
նում: Միթէ նա չի ունեցել զրա-
հաբածկոն, որը պէտք է որ ապա-
հովագրեր կրծքավանդակը մահա-
ցու կրակոցից: Դրանք քի՞չ են,
չկա՞ն, թէ պարզապէս զինծառա-
յողները չեն հագնում, որովհետեւ
չկայ բաւարար գիտակցական պատ-
րաստուածութիւն կամ կարգա-
պահութիւն:

Արդեօք հայկական բանակում
արւում են այդօրինակ դէպքերից
յետոյ անհրաժեշտ եղարակացու-
թիւններ եւ հետեւութիւններ, ու
արդեօք արդիւնասէտորէն լուծում-
ներ են տրւում հայ զինծառայող-
ների դիրքային անվտանգութեան
մակարդակը բարձրացնելու ուղ-
ղութեամբ:

ի վերջոյ, հատուցում պարտադրելուց, ինչպէս նաեւ միջազգային դիւանագիտական ատեան-ներում Արտպէջանի ացդ գործողութիւնները դատապարտելու ջանքից առաջ, Հայաստանի գլխաւոր ջանքը պէտք է լինի կանխարգելել դրանք, որովհետեւ առնուազն մի-ամտութիւն կը լինի յոյար Արտպէջ-ճանի «կարգապահութեան» կամ «մարդասիրութեան» վրայ զնելը: Եւ Հայաստանի բանակի ղեկավարութիւնը թերեւս գիտակցում է ացդ ամէնը: Պարզապէս հարցն այնէ, թէ գիտակցելով հանդերձ, որ քանի է արդիւնաւէտ լուծումներ տալու կարողութիւնը:

«ՀՐԱԳԻՐ»

ԻՇԽԱՆԱԳՈՒԽՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՑԻ ԵՎ «ԹԹՈՒԻՔԱՐԻ» ՄԻՋԵՒ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Այն, որ կառավարութեան
առանցքային նախարարներից մէ-
կը կարող է պիտածէի քննարկում-
ների ժամանակ համակարգչային
խաղ խաղալ, բացայացում է Հա-
յաստանի պետական կառավարման
համակարգի իրական վիճակը:

Խօսքն այն մասին չէ, որ
տուեալ նախարարը չի յարգուս
վարչապետին (Եթէ հարցին մօտե-
նանք այդ տեսանկիրւնից, ապա
նախարարների մեծ մասը պիտի
թղթից «սամձալիոտ» սարքեր)՝
առաւել եւս՝ խօսքն այն մասին չէ
որ նախարարը ձանձրանում է
հետեւաբար՝ ճիշտ կ'անի, եթիւ
հրաժարական տայ եւ թողնի իր
համար ձանձրալի այդ պաշտօնը
Խօսքն այն մասին է, որ խորհրդա-
րանում պիտածէի քննարկումն իս-
կապէս ձեւական միջոցառում է
ծիսակարգ, որն ամէն տարի գրեթէ
նոյնութեամբ կրկնուում է եւ վա-
ղուց բոլորին ձանձրացըել է: Բո-
լորն էլ զիտեն, որ պիտածէի
նախազիծը գրուում է կառավարու-
թիւնում, յետոց բերուում է խորհր-
դարան, այնտեղ էլ, աւանդութիւն-
համաձայն, ընդդիմութիւնը բո-
ցաշունչ ելութեներ է ունենուում այն
մասին, որ մարդկանց թոշակները
պէտք է բարձրացնել եւալըն, ու
վերջում, միեւնոյն է, նախազիծն
ընդունուում է համարեա նոյնու-
թեամբ: Մի խօսքով՝ «Նա կարող է
գոռալ, ճչալ, քացի տալ, դա հինա-
ւուրց, գեղեցիկ աւանդութ է»:

ուած լինէր անկուսակցական զոռ
տեխնիկաներից եւ կթվորուչինե-
րից: Ինչո՞ւ: Որովհետեւ ե՛ւ Ռո-
բերտ Քոչարեանը, ե՛ւ Սերժ
Սարգսեանը խորհրդարանի հետ
կապուած միայն մի մտահոգու-
թիւն են ունեցել՝ որ այն հնարա-
ւորինս անշառ լինի:

Հաստ է ուժեան՝ Հայաստանի
պետական կառավարման համա-
կարգի հենց այս առանձնայատ-
կութեամբ էլ պայմանաւորուած
են ներքաղաքական գործընթաց-
ները։ Համակարգն այնպիսին է,
որ բացարձակապէս որեւէ նշանա-
կութիւն չունի՝ ընդդիմութիւնը
խորհրդարանում 5 տոկո՞ս ունի,
թէ՝ 49։ Եթէ իշխանութիւններն
ունեն իրենց անհրաժեշտ 51 տոկո-
սը՝ վերջ։ Խորհրդարանը վերած-
ւում է ճեւական կառուցի, նախա-
րարներն էլ «շարիկ են գլորում»։
Եւ հենց սա է պատճառը, որ
իշխանութիւններն այսօր կատաղի
պայքար են մզում Հայ ազգային
կոնգրեսի դէմ, բայց ՀՅԴ-ի ու
«Ժառանգութեան» նկատմամբ
բաւականին լոյալ են։ Խնդիրն այն
չէ, որ ՀՅԴ-ն ու «Ժառանգու-
թիւնն» աւելի «փափուկ» են կամ
պակաս վճռականութեամբ են պայ-
քարում իշխանութիւնների դէմ։
Ոչ, այդ ուժերը որոշ դէպքերում
կարող են անզամ կոնգրեսից աւե-
լի «մարտական» լինել։ Պարզա-
պէս իշխանութիւնները հասկա-
նում են, որ ՀՅԴ-ն ու «Ժառան-
գութիւնը» ինչ էլ անեն՝ երկուսով
միասին 10-15 տոկոսից աւելի
ձայն չեն ստանայ, եւ միայն
կոնգրեսն է, որ ի վիճակի է
(թէկուզ՝ տեսականօրէն) 50 տոկո-
սից աւելի ձայն հաւաքել։
Խորհրդարանական ընտրու-

Topic 5

ՄԱՍԻՆ ՏԱՐԱԹԱՐԵՐ

ՊԱՇՏՕՆՄԹՔՐԸ
ՄՈՑԻԱԼ, ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Ա.ԲԵԼՅԱՆԻ Ա.ՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐԾԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
ԳԱՐՈՒԵԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
ՅՎՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԻԹՅԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly

rgan of the Armenian Social
democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$120.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆ

ՐԱՋՖԻ ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆԻ ՆԱՄԱԿԸ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

«Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր նախագահ Ռաֆֆի Յովհաննիսեանը նոյեմբեր 21-ին հրապարակել է երկրի ղեկավարին ուղղուած մի նամակ, որում գրում է՝ «Թիֆ Սերժ Սարգսեանը իսկապէս ցանկանում է ազատ եւ արդար ընտրութիւններ անցկացնել, ապա պէտք է մի շարք քայլեր ձեռնարկի»:

Մասնաւորապէս, 14 կետից բաղկացած այդ հիմնաքայլերում Ռաֆֆի Յովհաննիսեանը երկրի նախագահին կոչ է անում բացառել իր կուսակցութեան գործունէութիւնը նախագահի նստավայրում, քաղաքապէտարաններից, գիւղապէտարաններից հանել իր ղեկավարած կուսակցութեան գրամենակները:

«Ժառանգութեան» առաջնորդը Սերժ Սարգսեանին նաեւ յորդում է բացառել «եկեղեցու քաղաքական օգտագործման կամ կուսակցականացման անգամ տպաւորութիւնը», կատարել քուէարկող քաղաքացիների մատների թանաքոտման եւ նրանց ցուցակների յետընտրական հրապարակման պահանջները:

ՀՀԿ-ի փոխնախագահ Գալուստ Սահակեանի խօսքով՝ իշխող կուսակցութիւնն ընդունում է Ռաֆֆի Յովհաննիսեանը ասածը, բայց դա իրենց կուսակցութեանը «չի վերաբերում»։ Արձագանքելով Ռաֆֆի Յովհաննիսեանի այս նամակին՝ Գալուստ Սահակեանը դրանցում արտայատուած մտքերը «կարծեցեալ» որակեց։ - «Ինչ որ ասում է տեքստում, կարծում եմ, դրանք յանիրակի ասուած խօսքը են, եւ պարզ պիտի ասեմ պարոն Յովհաննիսեանին, որ լրիւ ընդունում ենք իր ասածները, բայց վերաբերումները մեզ չի կարող վերաբերել»։

Սահակեանը այնուհետեւ պնդեց, թէ Սերժ Սարգսեանը նախագահի նստավայրում կուսակցական գործունէութեամբ չի զբաղ-



«Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Ռաֆֆի Յովհաննիսեանը կուսակցութեան գործունէութիւնը նախագահին կոչ է անում բացառել իր կուսակցութեան գործունէութիւնը նախագահի նստավայրի նախագահին կուսակցութեան գրամենակները։

Լում., - «Նախագահի կուսակցական գործունէութիւնը ծաւալում է կուսակցութեան կենտրոնական գրասենեկում։ Հիմնականում դա տեղի է ունենում ժամը 7-8-ից յետոյ, երբ պետական պաշտօնավարժման շրջանակներից դուրս է, եւ ամբողջ մամուլը այդ մասին գիտի»։

Իսկ «Ժառանգութիւն» կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ստեփան Սափարեանի համոզմամբ՝ Յովհաննիսեանի նամակը նպատակ ունի սթափութեան կոչ անել բոլորին եւ յատկապէս երկրի բարձրագոյն իշխանութիւններին, որոնք խօսում են ազատ ու արդար ընտրութիւնների անցկացնելու կամքի մասին ու յոյսեր ու սպասումներ առաջացնում միջազգային հանրութեան մօտ։

Ի պատասխան հարցին, թէ արդեօք «Ժառանգութիւն»-ը Սերժ Սարգսեանից պատասխան ակնկալում է, Սափարեանը նշեց. - «Տրամաբանութիւնը յուշում է, որ նա պէտք է անդրադառնայ սրան, եթէ ինքը իսկապէս գտնում է, որ իր քաղաքացիների, իր ընդդիմակաների խօսքը իր համար կարեւոր է, եւ ինքը լսում է կամ ունկնդրում է այդ խօսքը»։

ԿԸՅ-Ի ՆԱԽԱԳԱՅԸ «ԻԴԵԱԼԱԿԱՆԻՆ ՍՕՏ» Է ՈՐԱԿՈՒՄ ԸՆՏՐԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Հայաստանի կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում հերքեց այն պնդումները, թէ ընտրողների ցուցակը առաջիկայ համապետական ընտրութիւնների ժամանակ կարող է կեղծիքների պարարտ հող առաջացնել։

«Այսօր կարծում ենք, որ մենք ունենք իրականում իդէալականին մօտ ընտրողների ցուցակ, եւ դրա փայլուն ապացուցը հենց եղաւ վերջին իջեւանի ընտրութիւնները», - ասաց Մուկուչեանը՝ նշեց, որ շուրջ մէկ շաբաթ առաջ անցկացուած իջեւանի քաղաքաբետի ընտրութիւնների ժամանակ ընտրացուցակների հետ կապուած ինդիքները չառաջացան։

Ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի այն դրսարկմանը, որ իջեւանի ընտրութիւնների ժամանակ 78-ամեայ մի ծերունու ծննդեան օրուաց ու ամսաթիւի սիւնակում նշուած էր 0 թիւը, Մուկուչեանը դա համարեց ծրագրային սիսալ։

«Գիտէք, այդ 0-0-0-0 որոշակի թիւի հետ կապուած՝ դա, ըստ էութեան, աւելի շատ, ասենք, որովհակի ծրագրային ինդիքը է, որովհակի ծրագրային ինդիքը է այդ ցուցակները»։

Կարգչային ծրագրով են ձեւաւորում։ Բայց պէտք է նկատի ունենալ մի բան՝ որ իջեւանի քաղաքապետի ընտրութիւններում, որտեղ բաւականին մեծ թուով ընտրողները մասնակցեցին, պէտք է նկատել միանշանակ, որ չի եղել գէթ մէկ ղեկավարութիւնը որեւէ քաղաքացիների այսպիսայ տեղամասային կենտրոն, եւ պարզուի, որ վերջինիս ազգանունը ցուցակը չի կամ ունկնդրում չ այդ խօսքը»։

Կենտրոնական ընտրական յանձնաժողովի նախագահը համոզուած է, որ ընտրացուցակներն ու նոր Ընտրական Օրէնսդիրքը համարութիւն կտան կազմակերպել ընտրական գործընթացներն այնպէս, որ ուեւ քաղաքացի կամ քաղաքական ուժ անհասարակ պայմաններում չ չայտնուի։

Տիգրան Մուկուչեանը օրինակ բերեց օրէնսդրքում քարոզարաւի շրջանում բարեկործութիւնների արգելման դրոյթը, որը, ըստ նրա, առաջիկա ընտրութիւններին թոյլ կտայ զերծ մնալ բարեկործութեան անուան տակ կատարուող այսպէս կոչուած թաքնուած քարոզարշաւի հնարքներից։

ԸՆՏՐԱՑԵԱԿ ՅՈՎՐԱՆՆԻՍԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՅԸ ՏԵՂ ՉԹՈՂԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ

«Կարող եմ յայտնել մի միտք, որի համար ՀԱԿ-ը ինձ պէտք է պարգևատրի: Եթէ խորհրդարանական ընտրութիւններում «Հանրապետականի» ցուցակը զիստուրի Սերժ Սարգսեանը, ապա դա փրկութեան շամս կը լինի Լեւոն Տէր-Պետրոսեանի համար», - լրագրողների հետ հանդիպման ասաց Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեանը։

Նրա խօսքով՝ դա փրկողակ կը լինի Լեւոն Տէր-Պետրոսեանի համար, քանի որ նա կը յայտարարի, որ աս սովորական ընտրութիւններ չեն, այլ բովանդակային առումով նախագահական ընտրութիւնների առաջին մաս, եւ նրա հետագայ պայքարը քաղաքական դաշտում իմաստ կ'ունենայ: Հակառակ ղէպքում, ըստ քաղաքագէտի, Լեւոն Տէր-Պետրոսեանը ստիպուած է լինելու նուաստանալու ընտրութիւններում մրցակցել մի ուեւէ նորեկի հետ, ասենք՝ Գագիկ Բեղլարեանի կամ Տիգրան Սարգսեանի հետ:

«ՀԱԿ-ի քաղաքական ձեւաչափը յարիր էր որ ոչ թէ խորհրդարանական ընտրութիւններին, այլ նախագահական ընտրութիւններին, քանի որ 18 կուսակցութիւններով միասնական ցուցակ կազմելը դա առելի բարդ երեւոյթ է եւ ոչ մի քաղաքական ուժ, անգամ ամենահարիզմատիկ լիդերը, չի կարող զլուխ համել», - կարծիք յայտնեց Հմայեակ Յովհաննիսեանը։

Նրա համոզմամբ՝ եթէ քաղաքական ուժը «մեծ քաշ է պատուիրում» ու չի կարողանուի հետ առաջիկ Յովհաննիսեանը։



Քաղաքագէտների միութեան նախագահ Հմայեակ Յովհաննիսեան

այն բարձրացնել գոտկատեղից վերեւ, ինչպէս եղաւ ՀԱԿ-ի ղէպքում, երբ նա չկարողացաւ համեն արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների անցկացման, ապա դա վատ կարող է անդրադառնալ տուեալ քաղաքական ուժի մրցակցել մի ուեւէ նորեկի համար վրայագումատիկ լիդերը, չի կարող գլուխ համել», - կարծիք յայտնեց Հմայեակ Յովհաննիսեանը։

«Եթէ այս ընտրութիւններով ՀԱԿ-ը չլուծի իշխանութիւնը ունենալու հարցը՝ բաւարարութեան ունենալու մասնական ընդուներով, ապա ՀԱԿ-ի հետագայ գոյութիւնը լուրջ վտանգի առջեւ է», - ասաց Հմայեակ Յովհաննիսեանը։

«ԵԹԵ ԵՍ ՇԱՆՏԱՎ ԵՄ ԱՆՈՒՄ, ԹՈՂ ԻՆՉ ԴԱՏԵՆ».- ՅԱՐՈՒԹԵԻՆ ԱՌԱԲԵԼԵԱՆ

«Ուրբաթ երեկոյեան կառավարութիւնը լուրեր է տարածում, թէ իբր ես ֆաքսի միջոցով սպառնալիքներ եմ տարածում։ Այո, ես եմ ուղարկել այդ փաքսերը, սակայն իրենք բոլոր փաքսները չեն տեղադրել», - Նոյեմբեր 21-ին լրագրողներին պատմեց ՀՌԱԿ ատենապետ Յարութիւն Առաքելեանը։ Նրա խօսքով՝ ինքը շանտափ չի արել, ոչ էլ վախեցրել է, այլ ընդամենքը պահանջել է օրէնքը կիրառել եւ վերջ տալ ՀՌԱԿ-ի հանդիպ անօրինականութիւններին ու կամայականութիւններին։

«Եթէ մարդը օրէնք է պահանջում, դա շանտափ է ամուսնութիւն է։ Ինձ պէտք է յայտնաբերել իր իջեւանի քաղաքապետի ատենապետութիւնը կամ կազմակերպել ընտրական գործընթացն

ԼՈՒՐԵՐ

«ՌՈՒՍԱՏԱՆՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒՇՈՒՄ Է ՀԱՅԱՏԱՆԻ ՀԱՇՈՒԻՆ».- ԹՈՄԱՍ ՇԵ ՎԱԱԼ

«Դա տեղի ունեցաւ 23 տարի առաջ՝ յաջորդ ամսին (Դեկտեմբերին), Հայաստանի մեծութեամբ երկրորդ քաղաք Գլումրին, սակայն, չի վերականգնուել 1988թ. աւերիչ երկրաշարժից: Երկրաշարժի հետեւանքով զոհուեց բնակչութեան ութ տոկոսը: Հայկական թերթերից մէկի խմբագիր՝ Լեւոն Բարսեղեանը, որ անցած շաբաթ գլումրիում ինձ համար անձնական է քսկուրսավար էր ծառայում, հպարտօրէն ընդգծեց նրբառն սեւ քարէ տների մասին, ինչով յայտնի է նախկին ոռուսական այս քաղաքը: Նա խօսեց նաեւ հին շուկայի մասին, որը մինչեւ այսօր աւերռած է. իրականում սովետական շէնքերը փլուզուել են, իսկ աւելի հին շէնքերը՝ կանգուն մնացել: Նա նաեւ պատմեց ինձ, որ 6000 լուսանիք շարունակում է ապրել ժամանակաւոր կացարաններում, որոնք նրանց սովետական իշխանութիւններն էին տրամադրել», - «Հայաստանի բնակչութեան արտահոսքը» վերտառութեամբ յօդուածում գրում է Կարնէզի շիմադրամի եւրոպայի եւ եւրամադրել», - «Հայաստանի բնակչութեան արտահոսքը» վերտառութեամբ յօդուածում գրում է Կարնէզի շիմադրամի եւրոպայի եւ եւրամադրել», - «Հայաստանի բնակչութեան արտահոսքը» վերտառութեամբ յօդուածում գրում է Կարնէզի շիմադրամի եւրոպայի եւ եւրամադրել են:

«Չնայած, որ աշխարհն անցած շաբաթ նշեց իր եօթմիկարդերորդ բնակչի ծննունդը, որոշ երկրներում բնակչութեան թիւի պակաս կայ. Դրանք մեծամասամբ նախկին խորհրդացին երկրներն են, որոշներում, ինչպէս, օրինակ, Ռուսաստանում, Ռուկաբինայում եւ Բելառուսում, ինդիրը ծնելիութեան մակարդակն է, որոշներում՝ արտազաղթը, բնակչութեան արտահոսք»:

Դը վասալը նշում է, որ արտագործի ինդիրին բախւում են Միջին Ասիայի երկրները, Վրաստանը եւ Աղբքէջանը, որտեղ երիտասարդները, թողնելով իրենց հայրենիքը, հիմնականում՝ Ռուսաստան են մեկնում՝ աշխատանքութեան արտահոսք»:

«Այս ինդիրն առաւել ընդգուտած է, սակայն, երկու երկրում՝ Մոլդովայում եւ Հայաստանում, նշում է վերլուծաբանը եւ յաւելում. - Հայաստանից արտագործի մակարդակը, բացարձակ թիւերով, այդքան էլ չի գիշում հարաւորված կանեան հարեւանների՝ Աղբքէջանի եւ Վրաստանի արտագործի ցուցանիշներին: Սակայն, բնակչութեան փոքր թիւն այն աւելի սուր ինդիր է դարձնում: Սովետական վերջին մարդահամարի համաձայն, Հայաստանի բնակչութեան թիւը 3,3 մլն է, որոնց երկու երրորդ՝ քաղաքաբնակ է, մէկ եր-

րորդը՝ գիւղաբնակ: Այսօր հաւանաբար գիւղական բնակչութեան կէսը, ինչպէս նաեւ քաղաքացին բնակչութեան զգալի մասն արտագաղթել է՝ աշխատանք փնտուելու»:

Վերլուծաբանն այնուհետեւ նշում է, որ 2001թ. մարդահամարի տուեալներով Հայաստանի բնակչութեան թիւը 3 միլիոնից քիչ աւելի է: «Թիւի կրճատում գրանցուեց՝ չնայած այն հանգամանքին, որ 1989-92թթ. աւելի քան 400 000 մարդ էր Հայաստան մտել, որոնց մի մասը Լեռնացին Ղարաբաղից փախստականներ էին, կամ Մերձաւոր Արեւելքից ներգաղթեալներ: Այդ մարդկանց որոշ մասը մնաց Հայաստանում, բայց, հաւանաբար, մօտ մէկ միլիոն մարդ լքեց երկրը Սովետական կարգերի փլուզումից յետոյ:

2009թ. Gallup-ի անցկացած ուսումնասիրութիւնները ցոյց տուեցին, որ նախկին սովետական երկրներից ամենաշատը Հայաստանի բնակիչներն են ցանկանում ժամանակաւոր աշխատանք գտնելու նպատակով արտասահման մեկնել, իսկ երկրորդ ժամանակից արտասահման մեկնել, այսպիս աւելացնելով, որ վերոնշեալը միակ ինդիրը չէ, քանի որ բազմասենեականոց կառուցներից շատերը կիսով չափ դատարկ են. Հազարաւոր մարդիկ պարզապես թողել-հեռացել են:

ԵԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀԱՐՑԱՁՐՈՅՑ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՂԱՐՉԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՀԵՏ

- Խաղաղ պայմաններում բանակում վերջին շրջանում պարբերաբար տեղի ունեցող սպանութիւններն ու ինքնասպանութիւնները դարձել են ամենաշատ քննարկուող թեման:

- Բանակում կատարուղ այդ
երեւոյթների խորքային պատճառ-
ները պէտք է փնտռել պետութեան,
իշխանութեան մէջ: Հարկաւոր է
նկատի ունենալ իշխանութիւննե-
րի, հասարակութեան վերաբեր-
մունքը բանակի հանդէպ, հասա-
րակութեան մէջ առկայ պրոբեմ-
ների կուտակումը, որն անդրա-
դառնուած է Զինուած Ուժերի վրայ: Անթոյլատրելի է, որ խաղաղ պայ-
մաններում նման դաժան դէպքեր
տեղի ունենան: Բայց բանակում
կատարուղ իրադարձութիւնները
համանալու համար պէտք է դրանք
համեմատել այլ երկրների ԶՈՒ-
երում տեղի ունեցող նման դէպքե-
րի հետ: Նոյնիսկ ամերիկեան բա-
նակում բարձր է ինքնասպանու-
թեան դէպքերի ցուցանիշը. ԱՄՆ
զինուած ուժերում, որտեղ ծառա-
յում են միայն պայմանագրային
հիմունքներով զօրակոչուած զին-
ծառայողներ, ֆինանսաւորումը ան-
համեմատ բարձր է, սպաների սոց-
իալական վիճակը շատ աւելի բա-
րեկեցիկ, ուզգմական պիտուծն մէկ
զինուորի հաշուով հարիւրաւոր
անգամ բարձր է: Պենտագոնի տու-
եալներով, 2011 թուականի սկզբից
մինչեւ Յուլիս ընկած ժամանակա-
հատուածում ինքնասպան է եղել
ցամաքային զօրքերում ծառայող
151 զինուոր, իսկ CNN-ի տուեալ-
ներով, ուզգմաօդային ուժերում
արձանագրուել է ինքնասպանու-
թեան 28 դէպք, ուզգմածովայի-
նում՝ 33, ծովային-հետեւակում՝
21: Ի դէպ, միայն Յուլիս ամսուաց
ընթացքում ցամաքային զօրքե-
րում ինքնասպան է եղել 32 հոգի:
Այսինքն, 7 ամսուաց ընթացքում
ինքնասպանութիւն է գործել 232
զինուոր: Եթէ այս թիւը համեմա-
տենք բանակի անձնակազմի քանա-
կի, ապա նաև ՀՀ ԶՈՒ-ի հետ, ապա
այսուել ինքնասպանութիւնների
քանակը անհամեմատելի մեծ է:
Ընդ որում՝ Ամերիկան ապրում է
խաղաղ կեանքով, ուզգմական գոր-
ծողութիւնները ծաւալուն չեն: Իսկ
մեր բանակը ապահովում է աւելի
քան 1000 կմ սահմանի անվտան-
գութիւն: Սա, թերեւս, իր ազգե-
ցութիւն է ունենում մարդկանց
հոգեվիճակի վրայ:



- Այսինքն՝կիսապատերազմական վիճակն է ննան երեւոյթների պատճառը, թէ ինչ:

- Բանակում նման երեւոյթ-ների պատճառներից գլխաւորը սպայակազմի անզործութիւնն է. անկախ նրանից, թէ երկրում ինչ մթնոլորտ կայ, ինչ վերաբերմունք սպայի, բանակի հանդէպ, բանակի մարտունակութեան պատասխանաւուն սպայակազմն է: Իսկ մարտունակութեան հիմնական տարրերից են բարոյահոգեբանական վիճակն ու կարգապահութիւնը: Նման դէպքերի համար, անկախ վերը թուարկած օբյեկտիւ պատճառներից, պատասխանաւու է մի կողմից սպան, որի կանոնադրական եւ բարոյական պարտականութիւնն է կանխելայդպիսի դէպքերը, միւս կողմից դատախազութիւնը, որը պարտաւոր է բացայատել՝ դրանով իսկ կանխարգելելով յետագայ յանցագործութիւնները:
- Իսկ սպայակազմն ինչո՞ւ է անգործ:
- Զինուորի հետ հիմնական շփումը ներքեւի օղակներն են իրականացնում: Այսինքն՝ կարգապահութիւնը, մարտական պատրաստուածութիւնն իրականացնողները սպայական կազմն է, որը զբաղեցնում է դասակի, վաշտի, գումարտակի հրամանատարների պաշտօնները: Դա այն երիտասարդ սերունդն է, որը նոր է աւարտել բարձրագոյն ուսումնական հաստատութիւն ու սկսել աշխատել: Իսկ նման դէպքերը տեղի են ունենում երկու հիմնական պատճառներով՝ ի վիճակի չեն, եւ կամ ցանկութիւն չունեն իրավիճակը վերահսկելու: Իսկ բանակի բարձրօղակն էլ իր հերթին չի վերահս-

ԻՇԽԱՆԱՓՈԽԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԻ ԵՒ «ԹԹՈՒԹՔԱՐԻ» ՄԻՋԵՒ

Ծարունակուածէց 2-ին

թիւններն, այսպիսով, միանգամացն այլ իմաստ են ստանում: Մեծ հաշուով՝ որեւէ նշանակութիւն չունի, թէ որ կուսակցութիւնը քանի տոկոս է ստանում, ուժերի ինչ յարաբերակցութիւն է ձեւաւորում կոպիդիոնն կուսակցութիւն-

Ների միջեւ եւայլն։ Գոյսութիւն
ունի միայն մի հարց. ընդդիմու-
թիւնը 50 տոկոսից աւել՝ է
ստանում, թէ՝ պակաս։ Պարզ ասած՝
խորհրդարանը դառնում է իշխա-
նափոխութեան օրինական միջո՞ց,
թէ՝ շարունակում է մնալ «Թթուի-
քար»։ Մնացած հարցերը երկրոր-
դական են։

ՎԱՐՉՈՒ ԳՐԱՄԵՆԵԿՆԵՐ

**1060 North Allen Ave
Pasadena, CA 91104**

**Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել
(626) 398-0506**

կում նրանց, ճիշտ չի կազմակերպում սպաների մասնագիտական պատրաստությունն ու դաստիարակությունը: Արդիւնքում՝ այդ սպաների վիճակի չէ վերահսկելու իր ստորաբաժանումն ու կանխելու այնտեղ տեղի ունեցող յանցագործությունները կամ ոչ ցանկալի երեւոյթները:

- Զեր կարծիքով՝ շտկուո՞ղ է այս իրավիճակը:

- Իհարկէ, շտկուող է։ Մենք

պէտք է ամէն ինչ անենք՝ թոյլ
չտալու կոծկել բանակում կատա-
րուող դէպքերը, ինչը անկասկած
կը նպաստի բանակում դէպքերի
նուազմանը: Միւս կողմից, պէտք է
գիտակցենք, որ մեր երկրում բա-
նակը միակ կառուցն է, որը լիար-
ժէք կատարում է իր վրայ դրուած
պարտականութիւնը, ապահովում
է մեր երկրի անվտանգութիւնը:
Պէտք է բարձրացնել սպայի դերը
բանակում, սպայական ծառայու-
թեան հեղինակութիւնը, լուծեր
սպայի սոցիալական հարցերը, ին-
չը նոյնաշխ կանխարգելիչ նշանա-
կութիւն կ'ունենայ: Բանակում կա-
տարուող սպանութիւնները պէտք է
բացայացի դատախազութիւնը:
Զբացայացուած սպանութիւնը
կտրուկ բարձրացնում է նոր սպա-
նութիւնների հաւանականութիւնը:
Մինչեռ, բանակում կատարուած
սպանութիւնները բացայացելը
աւելի հեշտ է. պարզ է սպանու-

թեան վայրը, յայտնի է շրջապատը, այսինքն՝ գորամատում զինծառացողները, նրանց յարաբերութիւնները։ Հետեւաբար՝ դիւրին է փնտուել ու գտնել մարդասանին։
- Այդ դեպքում ինչո՞ւ չեն բացայատում։

- ገዢ ብቻ ወጥተዋና ከሚያስተካክለ
በመሆኑ የሚያስተካክለ የሚያስተካክለ

- Զեր կարծիքով՝ նախարարի հրաժարականը կամ մէկ-երկու գեներալի հրաժարականը կարո՞ղ է հարցի լուծում հանդիսանալ:

- Այն զօրամիաւորման հրամանատար գեներալը, որտեղ տեղի են ունենում սպանութիւնն դէքքեր, միանշանակ պէտք է պատճուի եւ կախուած քանակից եւ յանցագործութեան ձեւից, այդ պատիժը պէտք է լինել նկատողութիւնից մինչեւ քրէական պատասխանառութիւնն: Դա պահանջում է կարգապահական կանոնադրութիւնը եւ ստեղծուած իրավիճակը: Յատկապէս ինքնասպանութիւնների դէպքերն աւելի ծանր են, քանի որ մարդուն ինքնասպանութեան հասցնելու համար ժամանակ է պէտք, ու չվերահսկել իրավիճակն այդ առումով, խօսում է նրա մասին, որ սպայակազմը պարզապէս չի կատարում իր ուղղակի պարտականութիւնները:

ԱՐՄԱՆ ԳԱԼՈՅԵԱՆ

ՀԱՅՐԱՒՐԻ ԱՐՈՒԵՏԱԾ

ԱՐԱՄԱՔՐԱՀԱՄԵԱՆ

Քաղաքականութիւնը, ինչպէս
յատնի է, հնարաւորի արուեստ է:
Այս պահին հնարաւոր չէ կազմա-
քանդել աւագակապեսութիւնը կամ
սահմանադրական կարգ հաստա-
տել: Հնարաւոր չէ, որովհետեւ
աւագակապեսութեան առկայու-
թիւնը եւ սահմանադրական կարգի
բացակայութիւնը պայմանաւոր-
ուած են ոչ այսօրուայ իշխանու-
թիւնների կամ այսօրուայ ամբողջ
քաղաքական վերնախաւի բացա-
սական յատկանիշներով, ոչ էլ նոյ-
նիսկ գոյութիւն ունեցող քաղաքա-
կան եւ տնտեսական համակարգով:
Դրանք ածանցեալ են մեր հասա-
րակութեան արատներից, որոնց
հիմքը դրուել է ոչ այս 20 տարում,
ոչ էլ 20-րդ դարում: Դրանց մասին
շատ ենք խօսել, եւ դեռ բազմաթիւ
առիթներ կը լինեն՝ անդրադառ-
նալու: Բայց հիմա արձանագրենք
թէ ինչ էր հնարաւոր բարեփոխել
քաղաքական համակարգում հիմա
հենց այս տարուայ ընթացքում:

Այս տարի՝ մինչեւ խորհրդագույն ընտրութիւնների մեկնարկը, հնարաւոր էր համել առնուազն երկու բանի. 1) Փոփոխութիւններ մտցնել «Ընտրական օրէնսդրքում», որպէսզի ընտրութիւնները լինէին 100 տոկոսով համամասնական՝ այդպիսով ազատուելով խորհրդարանում առաւելողիոց «տեղական իշխանիկներից». 2) Ներմուծել մատը թանաքոտերունորմը՝ այդպիսով հնարաւորինս խուսափելով կրկնակի քուէարկութիւնից: Մանրուքներ են, դուք կ'ասէք, միեւնոյն է՝ դրանով արդար ընտրութիւնների հնարաւորչէ համել: Միանգամացն ճիշտ է Բայց եկէք համաձայննք. եթէ դուք քո առաջ զնում ես առաւելապաշտական, անիրազործելի ինդիբներ, իսկ մնացածը անուանում ես մանրուք եւ կոսէետիկա, ապա այդ

ինդիրները չիրագործելուց յետոյ
հասարակութեան հիմաթափու-
թիւնը շատ խորն է լինում՝ մար-
դիկ սկսում են մտածել, որ ոչ մի
բան էլ հնարաւոր չէ փոխել։ Եւ
հակառակը, եթէ քաղաքացիներին ցոյց
ես տալիս թէկուզ փոքր առաջընթացի
մի օրինակ, նրանք զգում են, որ դեռ
ամէն ինչ չէ, որ կորած է։

ՀԱԿ-ը երկխօսութիւն սկսեց՝
«իշխանութիւնը յանձնէք մեզ»
օրակարգով։ Թէեւ ձեւակերպումն
այդպիսին չէր, բայց էութիւնը
հենց դա էր։ Ցանկացած այլ թեմա
համարում է ընդդիմութեան հա-
ւակնութիւններին անհամապատաս-
խան։ Իշխանութիւնն առաջար-
կում էր այլ օրակարգ՝ պատ,
արդար ընտրութիւններ։ Պարզ է,
որ նա չէր պատրաստում ու չի
պատրաստում նման ընտրութիւն-
ներ անցկացնել։ Բայց երկխօսու-
թեան ընթացքում, փողոցում ունե-
նալով գոնէ 10 հազար մարդ,
հնարաւոր էր որոշակի զիջումներ
կորպել, մասնաւորապէս՝ իմ լիշա-
տակած երկուսը։ Կը լինէր չօշափե-
լի արդիւնք, որը գուցէ կ'ոգեւորէր
հասարակութեանը՝ յետազայ պա-
հանջներն առաջ քաշելու համար։
Դրան գումարենք նաև այն, որ
իրատեսական պահանջների շուրջ
հնարաւոր էր համախմբել միւս
ընդդիմադիր ուժերի՝ Դաշնակ-
ցութեան եւ «Ժառանգութեան»
կողմնակիցներին։ Այդ համազոր-
ծակցութիւնը չի ստացւում նախե-
ւառաջ ՀԱԿ-ի լիդերների մեծամ-
տութեան պատճառով։

իհարկէ, իտէլալական կը լի-
նէր, եթէ մեր կեանքում չլինէր
ազատութիւնը սահմանափակող
որեւէ ցանկապատ: Բայց եթէ այն
հնարաւոր չէ վերացնել, կարելի է
այդ ցանկապատը քաշել մի քանի
մեթր առաջ: Պահանջելով ամէն
ինչ սովորաբար ոչինչ էլ չես
ստանում:

«ԱՐԱԻՕՏ»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐչԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻմնական Կռիուս
ՀԻմնական Կռիուս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻմնական Կռիուս**

Հանրապետութեան վարչապետի յանձնարարականով մի շարք պետական գերատեսչութիւններ ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Ուիլսոնի ցիշատակի յաւերժացման նպատակով մշակել են միջոցառումների ծրագիր, որը համակարգում է Սփիտուքի նախարարութիւնը: Ծրագիրը ներառում է տեսահամաժողովի, բանավէճի, բացդասերի, նաև գիտաժողովի կազմակերպում:

Այսօր Ուիլսոնի իրաւարար վճռին նուիրուած դասախոսութիւնն է կարդացել Գալիֆորնիայի Լոս Անձելքսի համալսարանի պատութեան բաժնի դոկտոր, հայագիտական ամպիոնի վարիչ Ռիչը Յովկանը:

Ուիլսոնի իրաւարար վճռի համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան տիտղոսն ու իրաւունքները ճանաչւում էին նախկին Օսմանեան կայսրութեան վանի, Պիթլիսի, էրզրումի-Տրավիզոնի նահանգների վրայ: Յատկանշական է, որ Միացեալ Նահանգների նախագահ Վուդրո Ուիլսոնն իրաւարար այս վճռութեան կայսերեց 1920թ. Նոյեմբերի 22-ին, այն դէպում, երբ դաշնակից ուժերի գերազոյն խորհուրդը որոշում կայսերեց դիմել նախագահին դեռևս Ապրիլին:

Իրականում աս թակարդ էր, կարծում է Ռիչը Յովկանը: «Իրենք կ'ուզենացին, որ Ուիլսոնի վրայ դնեն ամբողջ պատասխանաւութիւնը հայկական հար-



թը լուծելու համար: Եւ զարմանալին այն է, որ Ուիլսոնն ընդունեց եւ ընկատ այդ թակարդը: Ինչո՞ւ, եթէ գլուխը, որ Սենատը երբեք չի ընդունի իր մանդատը: Նոյն իսկ իր ամենամտերիմ խորհրդականները խնդրեցին Ուիլսոնին, որ չդիմի այդ հարցը, որովհետեւ, եթէ դնի ու մերժուի, աւելի վաս կը լինի հայերի համար, որովհետեւ թուրքերին դա կ'ասի, թէ հայերը պաշտպան չունեն»:

Ուիլսոնն այսօր հայերի համար հերոս է, մինչդեռ իր քաղաքական սինալները աւելի նպաստեցին հայկական ողբերգութեանը, քան եթէ նա ոչինչ էլ չանձր, կարծում է պատմաբանը: «Նայէք, Ապրիլին ինդրել են, Նոյեմբերին

Յար.թ էջ 18

**ՓՈՏՈՒՄ Է ՀԱՐՍԱՑՈՒԱԾՈՒՅԹ ՈՒՐԱՆ
ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Մեր տարածաշրջանում կորել է խիստ հարստացուած ուրան եւ ամերիկացի մասնագէտներն այն փնտուում են նաև Հայաստանում: Հայաստանի ամերիկեան համալսարանում այսօր միջուկացին նիւթերի ու տեխնոլոգիաների տարածման վտանգաւորութեան մասին դասախոսութիւնն է կարդացել ձորձ թառնի համալսարանի պրոֆեսոր, ԱՄՆ պաշտպանութեան նախարարութեան յատուկ խորհրդատու Մեթիու Քրոնիզը:

Եթէ ձեռքի տակ լինի 25 կիլոգրամ հարստացուած ուրան, միջուկացին գէնք պատրաստելը, ինչպէս ասում են «խաղ ու պար է», վտահեցնում են մասնագէտները: Բաւական է վերցնել մետաղեալ խողովակ, մի ծայրում դնել պայթուցիկը, միւս ծայրում եւս պայթուցիկը, ապա կրակել նախ մէկ, յետոյ միւս կտորի վրայ ու ստանալ պայթիւն: Դժուարն այսուել պայթուցիկը, այսինքն հարստացուած ուրանը ձեռք բերելն է, ասում է



ձորջ թառնի համալսարանի պրոֆեսորը:

«Շատ գժուար է ձեռք բերել հարստացուած ուրան, միջուկացին գէնք պատրաստելը, ինչպէս ասում են «խաղ ու պար է», վտահեցնում են մասնագէտները: Բաւական է վերցնել մետաղեալ խողովակ, մի ծայրում դնել պայթուցիկը, միւս ծայրում եւս պայթուցիկը, ապա կրակել նախ մէկ, յետոյ միւս կտորի վրայ ու ստանալ պայթիւն: Դժուարն այսուել պայթուցիկը, այսինքն հարստացուած ուրանը ձեռք բերելն է, ասում է

Յար.թ էջ 18

**ԳԱՅԻՐԵԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՒ ԱՐԵՒՏԵԱՆ
ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒՄ» ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՐԾ**



Գահիրէի համալսարանի Հայակական ուսուումնասիրութիւնների կենտրոնում, Նոյեմբերի 14-15-ին, տեղի է ունեցել «Հայաստանն արաբական եւ արեւմտեան աղբիւրներում» թեմայով չորրորդ միջազգացին գիտաժողովը, որն այս անգամ նուիրուել է Հայաստանի անկախութեան 20-ամեակին: Այն կազմակերպուել էր Գահիրէի համալսարանի ռեկտոր Հուսամ Քամելի հովանական թեատրոնը:

Խնչպէս իր հերթին նկատեց մշակոյթի փոխնախարար Արթուր Պողոսեանը, նախաձեռնութիւնը թէեւ բաւականին ուշացած է, այնուամենայնիւ շատ կարեւոր է:

Նութեան աշակցութեամբ:

Բացման հանդիսաւոր արարողութեանը ներկայ էին ԵԱՀԱԳ նախարարի տեղակալ Վահիդ Գալալը, անուանի եղիպատցի մտաւորականներ, Գահիրէի եւ այլ համարանների պրոֆեսորներ, ուսանողներ, ինչպէս նաև եղիպատցայ համայնքի ներկայացուցիչների: Գիտաժողովի մասնակիցներին ողջունել են եղիպատում ՀՀ դեսպա-

Յար.թ էջ 18

ԳԻՏԱԺՈՂՈՎՐԾ ՆՈՒՐՈՒԱԾՈՒՅԹ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԻՆ

ՀՀ թանգարաններում պատող հայոց ժողովրդական կիրառական-գեղազարդմանն արուեստին վերաբերող արժէքները՝ մասնաւորապէս գորգերն ու գորգադրութիւնը ազգային ինքնութեան ու աւանդութեան իւրաքանչուուկ ուժերի ուժուուկ արդէքութը ու որոշում կայսերեց դիմել նախագահին դեռևս Ապրիլին:

Սշակոյթին առնչուող տեղեկատուական քարոզական պատերազմներում եթէ ոչ պարտուղական ապան, ապա առնուազն նահանջնութացային դիրքերում ենք յայտնուել, նկատեց կենարունի անօրէն Յովկէյանը: Նրա տեղեկացմանը՝ մասնաւորապէս ուսաւական եւ թրքալեզու պետութիւնների

տնտեսագիտական, հարաբարական շուկան լեցուն է հայ էթնոսին եւ նրա պատմամշակութացին անցեալին ու ներկային վերաբերող իրավութիւնը:

Հայ գորգագործութեան մշակոյթին նուիրուած հանրապէտական գիտաժողովը առաջինն է թէ խորհրդացին եւ թէ նորանկախ հանրապէտութեան 20-ամեայ պատմութեան ընթացքում: Այսօր մենք հայկական գորգագործութիւնը ու ոչինչ մէր երկրութ, այլեւ տարածաշրջանում եւ աշխարհում փորձում ենք դարձնել շատ լուրջ կուռան՝ քաղաքական ինդիրներ լուծելիս:

Խնչպէս իր հերթին նկատեց մշակոյթի փոխնախարար Արթուր Պողոսեանը, նախաձեռնութիւնը թէեւ բաւականին ուշացած է, այնուամենայնիւ շատ կարեւոր է:

Գահիրէի համալսարանի Հայակական ուսուումնասիրութիւնների կենտրոնում, Նոյեմբերի 14-15-ին, տեղի է ունեցել «Հայաստանն արաբական եւ արեւմտեան աղբիւրներում» թեմայով չորրորդ միջազգացին գիտաժողովը, որն այս անգամ նուիրուել է Հայաստանի անկախութեան 20-ամեակին: Այն կազմակերպուել էր Գահիրէի համալսարանի ռեկտոր Հուսամ Քամելի հովանական թեատրոնը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունել են եղիպատում ՀՀ դեսպա-

Յար.թ էջ 18

Authorized Broker

SERVING SINCE 1975

BEDROS S.
MARONIAN

(818) 500-9585

CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com

FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205

ԵՐԵՐԵՐ ՈՒԵ ԶԵ ՎԵՐԱԲԵՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՅԻՇԱՏԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆԻ

Կիրակի, Նոյեմբերի 13ին, 2011,
ֆաստինացի Ս. Գրիգոր Լուսաւո-
րիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս.
Պատարագի տեղի ունեցաւ հոգե-
հանգստեան արարողութիւն, նո-
րոգ հանգուցեալ ազգային բարե-
րար Սարգիս Սողանալեանի: Արա-
րողութեան նախագահեց Արեւմտ-
եան թէմի նախկին առաջնորդ՝
Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան,
մասնակցութեամբ եկեղեցւոյ նախ-
կին հովիւ Հոգ. Տ. Պարետ Շ. Վրդ.
Երէցեանի:

Այսուհետեւ ֆաստինացի
Հ.Մ.Մ.ի «Կարո Սողանալեան» սրա-
կին մէջ տեղի ունեցաւ յիշատակի
հանդիսութիւն եւ հոգեծաշ կազ-
մակերպութեամբ հայկական կրթա-
կան բարեսիրական Միութեան եւ
Հ.Մ.Մ.ի:

Ազգանուէր բարերարի յիշա-
տակը յարգելու եկած էր շուրջ 80
հոգի համար ընտրանի հասարա-
կութիւն մը: Ներկաներուն մէջ կը
նշմարուէին Գերշ. Տ. Վաչէ Արք.
Յովսէփեան, Հոգ. Տ. Վրդ. Երէցեանը հոգե-
հացի օրհնութեան համար:



Արական Միութեան անունով հան-
դիսութեան բացումը կատարեց
Գաբրիէլ Մոլոյեան: Ան որ հան-
գուցեալ բարերար Սարգիս Սողա-
նալեանի բարեմասնութիւնները
դրուատելէ ետք, հաւաիրեց հայ
Պարետ Շ. Վրդ. Երէցեանը հոգե-
հացի օրհնութեան համար:

Հոգեծաշէն ետք գործադրուե-
ցաւ օրուան պատշաճ յայտագիր
մը: Հայ Սարմանմարզական Միու-
թեան անունով խօսք առաւ թաղէ-
ու Քէօրողլեան: Ան երկու հայ
անձերէն մին էր, որ Գալիֆորնիա-
յէն եռլիք մեկնելով մասնակցած
էր Սարգիս Սողանալեանի յուղար-
կաւորութեան: Հանգուցեալի բա-
րեմասնութիւններուն մասին իո-
սելով դրուատեց անոր ազգօգուտ
ծառայութիւններն ու հայկական

տարբեր հաստատութիւններուն եւ
կազմակերպութիւններուն կատա-
րած պատկառելի նուիրատութիւն-
ները: Արդարեւ, անոնցմէ մին է
Հ.Մ.Մ.ի Փաստականացի այս կեղու-
նը, որ առի երախտագիտութիւն
իր սրահը անուանած է հանգուց-
եալի գաւկին՝ կարո Սողանալեանի
անունով:

Պէյլանի Հայրենակցական
Միութեան ատենապետ Տիգրան
Սարաֆեան, իր ելոյթին մէջ յայտ-
նեց որ անձամբ ծանօթ է Սարգիս
Սողանալեանին որպէս թէ պէյլան-
ցի (մօր կողմէ) եւ հաճրնցի (հօր
կողմէ) ճշգելով անոր նկարագրի
առանձնայատկութիւնները որպէս
լաւ հայ ու յաջող գործարար:

Ան ցաւ յայտնեց որ ազգային
բարերարի թաղումն եղած է շատ
անշուրք: Նշեց նաեւ որ շատ մը
կազմակերպութիւններ, որոնք անց-
եալին օգտուած էին իր բարերա-
րութիւններէն՝ ոչ միայն ծաղկեպ-
սակ չէին առաքած, այլև անունն
անգամ չէին յիշած....:

Իր ելոյթին մէջ լոնտոնահայ
ծանօթ ազգայիններէն Աստուր
Կիւգէլեան ոգեկոչելով յիշատակը
Սարգիս Սողանալեանին ընդգծեց
որ ան նիւթական մեծագումար
նուիրատութեամբ մը գարկ տուաւ
լոնտոնահայ գաղութի ազգային,
մարզական եւ՝ մշակութային կեան-
քի աշխուժացման եւ վերելքին:

Բժիշկ Վարդգէս Նահարեան
իր սրահի խօսքին մէջ բարձր
գնահատեց Սարգիս Սողանալեանի
հայրենանուէր ծառայութիւնները:
Մասնաւորաբար շեշտեց Հայաս-
տանի աղիտալի երկրաշարժին
առիթով հանգուցեալը աւելի քան

քան օդանաւերով օգնութեան փու-
թաց աղէտահար շրջաններու ան-
միջական կարիքներուն: Իր հեր-
թին՝ ելոյթ ունենալով Տիգին Մէյ-
րի նամարեան խօսեցաւ Սողանալ-
եան ընտանիքի հետ իր ունեցած
ծանօթութիւններուն մասին:

Յիշատակի սոցն հանդիսու-
թեան մասնակիցներու յատուկ ու-
ղերձ մը ղրկած էր հանգուցեալի
գաւակը՝ Կարո Սողանալեան, զոր
կարդաց Ծովիկ Քէօրողլեան: Ան
երախտագիտական ջերմ զգացում-
ներով շնորհակալութիւն կը յայտ-
նէր սոյն յուշահանդէսը կազմա-
կերպողներուն եւ մասնակիցներուն:

Փակման խօսքը կատարեց
Արեւմտեան թէմի նախկին առաջ-
նորդ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփ-
եան: Ինք անձամբ մասնակցած եւ
նախագահած ըլլալով բարերար
Սարգիս Սողանալեանի թաղման
արարողութեամ՝ ցաւ յայտնեց որ
19 յուղարկաւորներ կային միայն,
որոնցմէ երկուքը Գալիֆորնիայէն:

Սրբազնը դրուատելէ ետք բարե-
րար Ս. Սողանալեանի հայութեան
կատարած նուիրաբերումները, նշեց
նաեւ որ իր կեանքի ընթացքին
ունեցաւ վերիվայրումներ, որոնք
իրենց ժիստական անդրադարձն ու-
նեցան իր գործարար ասպարէզին
մէջ: Սարգիս Սողանալեանի անժա-
մանկ մահուան առթիւ Վաչէ Սրբա-
զանը իր խորազգաց վշտակցու-
թիւնները յայտնեց հանգուցեալի
ընտանեկան պարագաներուն, հա-
րազատաներուն եւ բարեկամներուն,
մաղթելով երկնային խաղաղու-
թիւն իր հոգին:

«Յիշատակն արդարոց օր-
նութեամբ եղիցի»:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՅ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԵԶ (200 ՇՈԳԻՒ ՇԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍԻԹԻԹԻՆՆԵՐ՝
ՇԵՌԱՎԱՅՆԵՐ
(626) 797-7680

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐՈՒ ԳՆԱՑՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին,
վարձու է տրում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ
նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ
5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ
լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ
փիքինքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժա-
մեայ ապահովութեան սիստեմ:

**Մանրամասների համար հեռածայնել՝
(818) 246-0125**

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝

\$ 400

Long Weekend-ների համար՝

\$ 500

Մէկ շաբաթուայ համար՝

\$ 675

Մէկ ամսուայ համար՝

\$ 1450

Հ.Բ.Ը. ԱՐՏԱՎԱՐ ԹԱՏԵՐԱԽՈՒԹ

ՄԵՐ ԵՒ ԾԻԾԱ

Կատակերգության 2 արարու

Հոկտեմբեր ՕՏԵՐԱ
Բանակի ԳՐԻԳՈՐ ՍԱՎԱՐԵՆԵՐ

Շաբաթ, Նոյեմբեր 5, 19, 26
Ժամը 8:00-ին

Կիրակի, Նոյեմբեր 6, 13, 20, 27
Ժամը 5:00-ին

Շաբաթ, Դեկտեմբեր 3, 10
Ժամը 8:00-ին

Կիրակի, Դեկտեմբեր 4, 11
Ժամը 5:00-ին

Սունկի Նուեր ՏԱՐ

Պատականական անդրադարձն ու-
նեցան իր գործարար ասպարէզին
մէջ: Սարգիս Սողանալեանի անժա-
մանկ մահուան առթիւ Վաչէ Սրբա-
զանը իր խորազգաց վշտակցու-
թիւնները յայտնեց հանգուցեալի
ընտանեկան պարագաներուն, հա-
րազատաներուն եւ բարեկամներուն,
մաղթելով երկնային խաղաղու-
թիւն իր հոգին:

«Յիշատակն արդարոց օր-
նութեամբ եղիցի»:

ԴԵԿԵՄԲԵՐ 4-Ի ԵԼՈՅԹ ԿՉ ՅՈՎԱՆԱՄՈՐ
ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՐ ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԼԵԱՆ ԹԵՍԻ ԱՌԱՋԱՐԱՐԱՆ



Հինգշաբթի Նոյեմբեր 17-ի կէսօրը Ամերիկայի Հայոց Արեւելեան թէմի Առաջնորդարանը այցելեցին Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեան և Արցախի Հայոց թէմի Առաջնորդ Գէրշ. Տ. Պարգևը Արք. Մարտիրոսեան: Անոնք Միացեալ Նահանգներ կը գտնուէին մասնակցելու համար ի նպաստ Արցախի Հանրապետութեան զարգացման նոյեմբեր 24-ին հեռավորութիւնք տարեկան «թէլեթոն»ին:

Հայրենի պաշտօնական հիւրերուն կ'ընկերակցէին Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի մնայուն եւ արտակարգ Դեսպան Թաթուլ Մարգարեան, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ մնայուն եւ լիազօր Դեսպան Կարէն Նազարեան, Արցախի Հանրապետութեան ԱՄՆ-ի ներկայացուցիչ Ռապրոթ Աւետիսեան եւ այլ պաշտօնական անձնաւորութիւններ:

Ամերիկայի Հայոց Արեւելեան թէմի Առաջնորդ Գէրշ. Տ. Խաժակ Արք. Պարսամինան դիմաւորեց հայրէնի պատուիրակութիւնը եւ գտնոնք առաջնորդէց Ս. Վարդան Մայր Տաճար, ուր մատուցուած աղօթքէն ետք՝ հիւրերը բարձրացան Առաջնորդարանի դահլիճը եւ հիւրամիրուեցան կէսօրուան ճաշով:

Ճաշի աղօթքէն ետք Առաջնորդ Գէրշ. Տ. Խաժակ Արք. Պարսամինան բարի գալուստ մաղթեց Արցախի Նախագահին, Արցախի Հայոց թէմի Առաջնորդին եւ բոլոր ներկաներուն՝ շեշտելով որ Առաջնորդարանը եւ Հայ Օգնութեան ֆոնտը մարդաբակական ինչպիսի օժանդակութիւն կը ցուցաբերէն անկախացած Արցախին եւ խոստացաւ որ այդ աշխատանքը պիտի շարունակուի: Խօսէլով ամերիկահայ երիտասարդներու Արցախի այցելութեան տպաւորութեանց մասին՝ ըստ որ այս այցելութիւն-

ները մեծապէս ազդած են անոնց հոգեկան աշխարհին վրայ, մանաւանդ անկախութեան տիրանալու համար Արցախի ժողովուրդին կատարած քաջարի պայքարը: Ապա՝ կենաց առաջարկեց Արցախի Հանրապետութեան Նախագահին, Գէրշ. Տ. Պարգևը Արք. Մարտիրոսեանին իւրանց արագածութիւններ եւ գործատեղիններ մնացին արանց ելեկտրականութեան եւ տարածայնութիւններ եղան թէ Շուշի Պարախումբի համերգը ջնջուածէ: Շատ կարծ ժամանակի մէջ, Պարախումբի անդամներու, ծնողքներու եւ բարեկամներու, աշխատանքներով առաջքը առնուեցաւ սիալ տարածայնութիւններու, եւ հակառակ այս բոլոր դժուարութիւններուն, Կիրակի 30 Հոկտեմբեր 2011ին նիւ եռքի եւ նիւ ծրգի համայնքն, 1400 հոգի լեցուցին Felician College-ի ընդարձակ սրահը, տօնախմբելու Հայաստեան համար:

Նախագահ Բակօ Սահակեան իր խօսքին մէջ մեծապէս գնահատեց Առաջնորդ Սրբազն Հօր առաջնորդութեամբ մատուցուած օժանդակութիւնները Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւններուն: Հսաւ որ Սրբազն Հօր ջանքերով գոյգ հանրապետութիւններու հանդէպ ստեղծուած է յարգանքի, սիրոյ եւ գործակցութեան մթնոլորտը: Արտայաջոտեցաւ այն դերին մասին որ արտասահմանը կրնայ ունենալի Արցախի տնտեսական եւ զարգացման մարգերուն մէջ եւ գնահատանքով արտայալուեցաւ Համահայկական Հիմնադրամի օժանդակութեանց մասին:

Խօսքի աւարտին՝ Նախագահ Տիար Բակօ Սահակեան Առաջնորդ Սրբազն Հօր յանձնեց «Արցախի Յուշամետալլը» ի գնահատութիւն Արցախի հանդէպ անոր ցոյց տուած մօտիկ հետաքրքրութեան եւ քահանայական ձեռնադրութեան 40-ամեակին առիթով:

Այս հանդիպումի ընթացքին ելույթ ունեցան նաեւ Արցախի Հայոց թէմի Առաջնորդ Գէրշ. Տ. Պարգևը Արք. Մարտիրոսեան, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի լիազօր եւ արտակարգ Դեսպան Տիար Թաթուլ Մարգարեան, Հայաստանի Հանրապետութեան ՄԱԿ-ի մօտ լիազօր եւ մնայուն Դեսպան Տիար Կարէն Նազարեան, եւ Հայ Օգնութեան Ֆոնտի Վարիչ Տիար Գառնիկ Նանակիւլեան:

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահամելերու և մանուկներու Բարբաժարացքի բաժնում:
Գլանցաւ, վզի, մէջքի, յօդային և միամային ցաներ:
Խնճուշարժի վարի ենուսնորով պատահած
վնասուածքներու բաժնում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՇՈՒՇԻ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ՀԱՅՈՒՆԱԿԱՎԱՆ ԵՒ ՅԱՂԹԱԿԱՆ ԵԼՈՅՑԹ



Շաբաթ Հոկտեմբեր 29, 2011ին, Ամերիկայի Արեւելեան շրջանը ձիւնամքրիկի հետեւանքով, ճամբանքանը փակուեցան, հազարաւոր տուներ եւ գործատեղիններ մնացին արանց ելեկտրականութեան եւ տարածայնութիւններ եղան թէ Շուշի Պարախումբի համերգը ջնջուածէ: Շատ կարծ ժամանակի մէջ, Պարախումբի անդամներու, ծնողքներու եւ բարեկամներու, աշխատանքներով առաջքը առնուեցաւ սիալ տարածայնութիւններու, եւ հակառակ այս բայցանքը առաջին անգամ բարեկամ էր այս տարածայնութիւններու, բոլոր սահմանական գործութիւններու վերաբերյալ համար մէջ: Նիւ եռքի եւ նիւ ծրգի իսումբբերը բոլորը միասին երգելով: Շատ յուզի եւ ազդեցիկի էր տեսարանը երբ միաժամանակ բոլոր սահմանական գործութիւններու վերաբերյալ համար մէջ: Եղանակով առաջքը առնուեցաւ սիալ տարածայնութիւններու, եւ հակառակ այս բայցանքը առաջին անգամ բարեկամ էր այս տարածայնութիւններու, բոլոր սահմանական գործութիւններով:

